

Կ. Պոլսոյ Պատրիարք Սարգիս Վ. Թէքիր-տաղցւոյն հետ :

Չափահաս ըլլալէն ետեւ Սարգիս՝ ոսկերչութեան արուեստին աշակերտեցաւ : Սակայն ասկէ համ չառնելով՝ ուզեց եկեղեցական ուսմանց հետեւիլ եւ քարոզներու ներկայ գտնուիլ : Այս ժամանակի Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքն Յովհաննէս Բաղիշեցի կոչոտ (նստած 9 Սեպտ. 1715, ըստ Բարգէն Վ. Ի անդ, էջ 173, Ծան. 2 : Սարգիս դպիր Յովհաննիսեան իւր մէկ ձեռագրին մէջ կը դնէ Սեպտ. 7) իր հիմնարկած դպրոցին մէջ ուշիմ պատանիներ կը ժողվէր եւ կ'ուսուցանէր : Սարգիս այս աշակերտաց զարգացումը տեսնելով՝ ուզեց անոնց դասակցիլ. սակայն հայրը՝ որուն մի միակ արու զաւակն էր Սարգիս, բացարձակ ընդդիմացաւ ասոր : Բայց յետոյ տեսնելով որ անկարելի է զինք ետ կեցընել՝ վերջապէս հաւանեցաւ, եւ Սարգիս 2) տարեկան ազնիւ պատանին, որ արդէն իբրեւ դպիր՝ Սուրբ կարգի չորս փոքր աստիճաններն ընդունած էր, խանութն ու ոսկերէնները ծախեց, գոյացած դրամին կէսը դարձուց հօրը՝ որ դրամագլուխը դրած էր, միւս կէսն իբրեւ իւր վաստակն անձին պահեց, եւ 1719ին մտաւ պատրիարքական դպրանոցը :

2.

Սարգսի վարդապետ ձեռնադրուիլը, քարոզչութիւնը, Կեսարիոյ Առաջնորդ ընտրուիլը, Ս. Կարապետի վանքին պարտքն հատուցանելու համար մինչեւ